

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի  
2013թ. հոկտեմբերի 17-ի նիստի

Խորհրդի 32 անդամներից ներկա էին 27-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ Գ. Ղազինյանը, քարտուղարում խորհրդի քարտուղար Ս. Միմոնյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվեարկության դրեց օրակարգը, որը միաձայն հաստատելուց հետո խորհուրդն անցավ օրակարգի հարցերի քննարկմանը (օրակարգը կցվում է):

**ՕՐԱԿԱՐԳ.**

1. *Գիտական կոչումների շնորհման մասին:*
2. *ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2013-2014թթ. իրականացվելիք գիտական միջոցառումների հայեցակարգի մասին:*
3. *Հեռակա ասպիրանտուրայի թեկնածուների երաշխավորման մասին:*
4. *Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2013-2014 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատման մասին (զեկուցող՝ գիտ. քարտուղար Ս. Միմոնյան):*
5. *Առարկայական ծրագրերի հաստատման մասին (զեկուցող՝ մեթոդխորհրդի նախագահ՝ դոց. Ա. Մարգարյան):*
6. *Իրավագիտության ֆակուլտետում մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացքի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):*
7. *2012-2013 ուս. տարվա երկրորդ կիսամյակի վերջին լուծարքային շրջանի արդյունքների մասին (զեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):*
8. *Ընթացիկ հարցեր:*

1. **ԼՄԵՑԻՆ.** Գիտական կոչումների շնորհման մասին (զեկ.՝ մրցութային հանձնաժողովի նախագահ՝ Ս. Դիլբանդյան):

1.1. **ԼՄԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Լիպարիտ Մելիքջանյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Լիպարիտ Մելիքջանյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Տ.Բարսեղյանը, Վ. Քոչարյանը, Ս. Առաքելյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Գիտական խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Լիպարիտ Մելիքջանյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

**1.2. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Արթուր Չախոյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Արթուր Չախոյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Տ.Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Վ. Քոչարյանը, Ս. Առաքելյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Գիտական խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու Արթուր Չախոյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

**1.3. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. դոկտոր Արթուր Վաղարշյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի նախագահ Ս.Դիլբանդյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Արթուր Վաղարշյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Տ.Բարսեղյանը, Տ. Սիմոնյանը, Վ. Քոչարյանը, Ս. Առաքելյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուզյանը, Գ.Ղազինյանը:

Գիտական խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ Պետության և իրավունքի տեսության և պատմության ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. դոկտոր Արթուր Վաղարշյանին շնորհել պրոֆեսորի գիտական կոչում:

**1.4. ԼՍԵՑԻՆ.** Գիտական կոչումների շնորհման մասին (զեկ.՝ մրցութային հանձնաժողովի փոխնախագահ՝ Ս. Առաքելյան):

**ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի միջնորդությունը քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. դոկտոր Սամվել Դիրանդյանին պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի փոխնախագահ Ս.Առաքելյանը ծանոթացրեց թեկնածուի անձնական գործի տվյալներին, հայտնեց, որ Սամվել Դիրանդյանի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են պրոֆեսորի գիտական կոչում շնորհելու մասին ՀՀ կառավարության կողմից սահմանված պահանջներին, ինչպես նաև ներկայացրեց հավակնորդի թեկնածության վերաբերյալ համապատասխան ամբիոնի միաձայն երաշխավորությունը և ֆակուլտետի մրցութային հանձնաժողովի դրական եզրակացությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Տ.Բարսեղյանը, Ռ. Մելիքյանը, Վ. Քոչարյանը, Ս. Առաքելյանը, Ս.Մեղրյանը, Ա.Գաբուրյանը, Գ.Ղազինյանը:

Գիտական խորհուրդը որոշեց անցկացնել բաց քվեարկություն, որի արդյունքում միաձայն բավարարվեց մրցութային հանձնաժողովի միջնորդությունը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել քվեարկության արդյունքները և միջնորդել ԵՊՀ գիտական խորհրդին՝ Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, իրավ. գիտ. դոկտոր Սամվել Դիրանդյանին շնորհել պրոֆեսորի գիտական կոչում:

**2. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի 2013-2016թթ. իրականացվելիք գիտական միջոցառումների հայեցակարգը (զեկուցող՝ դեկանի տեղակալ Ա. Հայկյանց)

Զեկուցողը ներկայացրեց իրականացվելիք գիտական միջոցառումների հիմնական ուղղությունները, միջոցառումների կազմակերպման կառուցակարգը, մոտավոր ժամանակացույցը և այն միջոցառումներ, որոնք անհրաժեշտ են իրականացնել հայեցակարգային դրույթները կյանքի կոչելու համար:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Վաղարշյանը, Վ. Ավետիսյանը, Ս. Մեղրյանը, Ս. Քոչարյանը, Վ. Քոչարյանը, Գ. Ղազինյանը :

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել 2013-2016թթ. իրականացվելիք գիտական միջոցառումների հայեցակարգը (կցվում է), ինչպես նաև այն միջոցառումների ցանկը, որոնք անհրաժեշտ են իրականացնել հայեցակարգային դրույթները կյանքի կոչելու համար: Միջոցառումների իրականացման համակարգող նշանակել Ա. Հայկյանցին: Հանձնարարել ամբիոններին կատարել համապատասխան քայլեր՝ համաձայն հաստատված միջոցառումների ցանկի:

*a. Ըստ ամբիոնային ուղղվածության՝ գիտահետազոտական գերակա ուղղությունները՝ ժամանակակից հայ ազգային իրավական կեցության և ժամանակակից միջազգային-իրավական մարտահրավերների ըստ ամենայնի հաշվառմամբ.*

- b. *Մեկամսյա ժամկետում ամբիոնի ասպիրանտների և հայցորդների համար սահմանել պարտադիր տարեկան մեկ գիտաշրջան, երբ նրանք հանդես կգան գիտական թեզիսով՝ իրենց գիտահետազոտական թեմայի շրջանակներում, և դա էլ կհանդիսանա նրանց տարեկան մասնագիտական ատեստավորման պարտադիր պայման:*
- c. *Մինչև ուսումնական կիսամյակի ավարտը՝ հասարակական հիմունքներով ձևավորել գիտա-բանավիճային ակումբներ՝ միջամբիոնային մասնագետների ներգրավմամբ՝ իրավագիտության և ազգային անվտանգության առավել արդիական հիմնահարցերի ուղղությամբ (հայոց ցեղասպանության դատապարտման և բարոյական ու նյութական վնասի փոխհատուցման իրավական ասպեկտները, Լեոնային Ղարաբաղի կարգավիճակի կանխորոշման իրավական ուղիներ, վարչարարության բարելավման հիմնարար ուղղությունները, հակակոռուպցիոն քաղաքականությունը և հանցավորության դեմ պայքարը, եվրաինտեգրման հեռանկարները, կորպորատիվ իրավունքի զարգացում, պայմանագրային իրավունքի զարգացում, մտավոր սեփականության իրավունքի զարգացում և այլն):*

**3. ԼՍԵՑԻՆ. Հեռակա ասպիրանտուրայի թեկնածուների՝ ընդունելության քննություններին մասնակցելու երաշխավորություն տալու մասին:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Խորհրդի գիտական քարտուղարը Ս. Միմոնյանը հայտնեց, որ ԵՊՀ 2013-2014 ուսումնական տարվա ասպիրանտուրա ընդունվելու համար երաշխավորություն տալու խնդրանքով գիտական խորհրդին են դիմել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հետևյալ շրջանավարտները.

- Մարիամ Այվազյան,
- Աշխեն Սողոմոնյան,
- Անահիտ Անտոնյան,
- Ռոզա Աբրահամյան,
- Նանե Սահակյան,
- Հայկուհի Սեդրակյան,
- Անի Միքայելյան,
- Անի Մուրաֆյան,
- Գոռ Միրզոյան:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Տ. Բարսեղյանը, Ն. Այվազյանը, Ա. Գաբուզյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՑԻՆ.** Հաշվի առնելով վերոհիշյալ մագիստրոսների բարձր առաջադիմությունը և հեռակա ասպիրանտուրայում ուսումը շարունակելու ցանկությունը՝ երաշխավորել նրանց մասնակցելու հեռակա ասպիրանտուրայի ընդունելության քննություններին:

**4. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2013-2014 ուսումնական տարվա աշխատանքային ծրագրի հաստատման մասին (զեկուցող՝ գիտ. քարտուղար Ս. Միմոնյան):**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ձեկուցողը ներկայացրեց ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2013-2014 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը՝ առանձնացնելով դրանում ընդգրկված և ֆակուլտետի գործունեությանը վերաբերող առավել կարևոր

հարցերն ու խնդիրները: Տ. Միմոնյանը նշեց նաև, որ աշխատանքային ծրագիրը վերջնականապես չի կանխորոշում խորհրդի կողմից քննարկվելիք հարցերի շրջանակը և ուսումնական տարվա ընթացքում խուրհուրդը կարող է ըստ անհրաժեշտության անդրադառնալ արդիական և հրատապ հարցերի, ինչպես դա եղել է նախորդ տարիներին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Տ. Բարսեղյանը, Ն. Այվազյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Մեղրյանը, Ա. Գաբուզյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաստատել ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի 2013-2014 ուսումնական տարվա աշխատանքային ծրագիրը (կցվում է):

**5. ԼՍԵՑԻՆ. Առարկայական ծրագրերի հաստատման մասին (զեկուցող՝ մեթոդխորհրդի նախագահ՝ դոց. Ա. Մարգարյան):**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Զեկուցողը ներկայացրեց, որ բոլոր ամբիոններից էլ ստացվել են առարկայական ծրագրերը, հետ վերադարձից հետո թերությունները շտկվել են և ֆակուլտետի ուսումնական-առարկայական ծրագրերն արդեն պատրաստ են ամբողջությամբ, և կարելի է ամբողջությամբ ներկայացնել գիտխորհրդի հաստատմանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Միաձայն հաստատել արդեն ուսումնական-առարկայական ծրագրերն ամբողջությամբ:

**6. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետում հեռակա ուսուցման մագիստրոսական թեզերի պատրաստման ընթացքի մասին (զեկ.՝ ամբիոնների վարիչներ):**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ Ս. Դիլբանդյանը ներկայացրեց քրեադատավարական ուղղությամբ գրվող տասներկու թեզերի պատրաստման ընթացքը՝ նշելով, որ խնդիրներ կան՝ միայն երեք աշխատանքի հետ կապված:

Քրեական իրավունքի ամբիոնի վարիչ Ա. Գաբուզյանը ներկայացրեց քրեաիրավական ուղղությամբ գրվող տասնվեց թեզերի պատրաստման ընթացքը՝ նշելով, որ խնդիրներ կան՝ միայն երեք աշխատանքի հետ կապված:

Քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Ս. Մեղրյանը ներկայացրեց քաղաքացիական և քաղաքացիական ադատավարության ուղղությամբ գրվող տասնվեց թեզերի պատրաստման ընթացքը՝ նշելով, որ վեց ուսանող արդեն չեն ատեստավորվել: Այս խնդրի մասին նշեց նաև Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ Ս. Մեղրյանը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Գ. Դանիելյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Առաքելյանը, Գ. Ղազինյանը, Ն. Այվազյանը :

**ՈՐՈՇՎԵՑԻՆ.** Ընդունել ամբիոնների զեկուցումներն ի գիտություն :

Հանձնարարել ամբիոններին հետևել, որպեսզի թեզերի ղեկավարները և մագիստրոսներն աշխատանքները պատրաստելիս խստորեն առաջնորդեն հաստատված մեթոդական չափորոշիչներին. մասնավորապես՝ աշխատանքի կառուցվածքին, բովանդակությանը և աշխատանքի ներկայացման ժամանակին վերաբերող պահանջներին :

**7. ԼՄԵՑԻՆ. 2012-2013 ուս. տարվա երկրորդ կիսամյակի վերջին լուծարքային շրջանի արդյունքների մասին (գեկ.՝ դեկանի տեղակալ, ի.գ.դ. Հ. Խաչիկյան):**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Զեկուցողը ներկայացրեց, որ 2012-2013 ուս.տարվա երկրորդ լուծարքային շրջանից հետո քննություններից պարտք են մնացել 123 ուսանող : Հեռացվել են. 2-րդ կուրսից՝ 5 ուսանող, 3-րդ կուրս՝ 5 ուսանող, 4-րդ կուրս՝ 1 ուսանող, մագիստրատուրա 1-ին կուրս՝ 1 ուսանող, մագիստրատուրա 2-րդ կուրս՝ 7 ուսանող:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ն. Այվազյանը, Գ. Դանիելյանը, Տ. Բարսեղյանը, Ա. Վաղարշյանը, Ս. Դիլբանդյանը, Ս. Մեղրյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** 2012-2013 ուս. տարվա 2-րդ կիսամյակի երկրորդ լուծարքային շրջանի արդյունքների ամփոփման հարցի վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

**8. ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐ:**

**8.1. ԼՄԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողի համալրման մասին :**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Դեկան Գ. Ղազինյանը նշեց, որ Մրցութային հանձնաժողովի նախկին անդամն Աննա Մաթևոսյանը, Հայաստանից տևական ժամանակ բացակայելու պատճառով, այլևս հիմնական աշխատող չի համարվում և չի կարողանում իրականացնել հանձնաժողովում իր պարտականությունները, ուստի անհրաժեշտ է հանձնաժողովի նոր անդամ ընտրել : Խնդրեց ներկայացնել առաջարկություններ :

Տ. Բարսեղյանն առաջարկեց Աննա Մարգարյանի թեկնածությունը, ով ինքնաբացարկ հայտնեց : Գ. Դանիելյանն առաջարկեց Տարոն Սիմոնյանի թեկնածությունը, ով ինքնաբացարկ հայտնեց : Գ. Ղազինյանն առաջարկեց Դավիթ Սերոբյանի թեկնածությունը :

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Միաձայն Իրավագիտության ֆակուլտետի մրցութային հանձնաժողի անդամ ընտրել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Դ. Սերոբյանին:

**8.2. ԼՄԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի դոցենտ Գ. Բեքմեզյանի դոկտորական ատենախոսությունը հաստատելու մասին :**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Տ. Բարսեղյանը, Վ. Ավետիսյանը, Ս. Մեղրյանը, Գ. Ղազինյանը :

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ամբիոնի դեցենտ Գ. Բեքմեզյանի «Արտապայմանագրային պարտավորությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» վերատառությամբ դոկտորական ատենախոսության թեման:

**Բ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը :

**8.3. ԼՄԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի առկա ասպիրանտ Ռաֆիկ Գրիգորյանի ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:**

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Տ. Բարսեղյանը, Վ. Ավետիսյանը, Ս. Մեղրյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.**

**Ա.** Հաստատել ամբիոնի առկա ասպիրանտ Ռաֆիկ Գրիգորյանի՝ «Պարտատոմսերի շրջանառության իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման:

**Բ.** Ղեկավար հաստատել ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Վ. Ավետիսյանին :

**Գ.** Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

**8.4. ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի վարիչ, դոցենտ Վ. Ավետիսյանի «Կորպորատիվ իրավահարաբերությունների արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին :

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Մարգարյանը, Տ. Բարսեղյանը, Վ. Ավետիսյանը, Ս. Մեղրյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

**8.5. ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Պավել Թադևոսյանի՝ «Օտարերկրյա դատարանների քաղաքացիական գործերով կայացված դատական ակտերի ճանաչումը և կատարումը Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին :

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Մարգարյանը, Ս. Մեղրյանը, Վ. Ավետիսյանը, Գ. Ղազինյանը :

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

**8.6. ԼՍԵՑԻՆ.** Քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասիստենտ, ի.գ.թ. Տիգրան Մարկոսյանի՝ «Նոր երևան եկած հանգամանքներով դատական ակտերի վերանայման վարույթը քաղաքացիական դատավարությունում» վերտառությամբ մենագրությունը տպագրության երաշխավորելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Մարգարյանը, Ս. Մեղրյանը, Վ. Ավետիսյանը, Գ. Ղազինյանը :

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական

մակարդակով և ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

**8.7. ԼՍԵՑԻՆ.** Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ Դ. Ավետիսյանի, Ս. Ավետիսյանի, Հ. Ասատրյանի, Հ. Ավագյանի, Ա. Մարգարյանի, Ռ. Մելիքյանի, Հ. Ղուկասյանի, Ա. Վարդապետյանի համահեղինակությամբ «Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի որոշումների գիտագործնական մեկնաբանությունները» վերտառությամբ աշխատանքը տպագրության երաշխավորելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Մարգարյանը, Հ. Ղուկասյանը, Ա. Վաղարշյանը, Գ. Ղազինյանը :

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի գիտագործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

**8.8. ԼՍԵՑԻՆ.** Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի դոցենտ, ի.գ.թ. Ս. Առաքելյանի «Преступное насилие» վերտառությամբ մենագրությունը տպագրելու երաշխավորելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Մարգարյանը, Ա. Գաբուգյանը, Ս. Առաքելյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

**8.9. ԼՍԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ի.գ.թ. Թամարա Արայի Շաքարյանի՝ «Իրավաբանական անձը՝ որպես վարչական պատասխանատվության սուբյեկտ» թեմայով մենագրությունը տպագրելու երաշխավորելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Մարգարյանը, Ա. Այվագյանը, Գ. Դանիելյանը, Գ. Ղազինյանը:

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

**8.10. ԼՍԵՑԻՆ.** Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ Է. Շաթիրյանի, Ա. Սանապանի և Ա. Հովհաննիսյանի համահեղինակությամբ «Ընտրական օրենսդրության արդի հիմնահարցերը և զարգացման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ աշխատանքը տպագրության երաշխավորելու մասին:



**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Մարգարյանը, Ա. Այվազյանը, Գ. Դանիելյանը, Վ. Ավետիսյանը, Գ. Ղազինյանը :

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Հաշվի առնելով Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը և ֆակուլտետի մեթոդական խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև այն, որ նշված աշխատությունը գրված է պատշաճ գիտական մակարդակով և ունի գիտագործնական կարևոր նշանակություն, երաշխավորել տպագրության:

**8.11. ԼՍԵՑԻՆ.** ԵՊՀ գրադարանային խորհրդում Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմից թեկնածություն ներկայացնելու մասին:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** Ա. Վաղարշյանը, Ս. Մեղրյանը, Ա. Այվազյանը, Գ. Դանիելյանը, Վ. Ավետիսյանը, Գ. Ղազինյանը :

**ՈՐՈՇԵՑԻՆ.** Միաձայն ԵՊՀ գրադարանային խորհրդում Իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմից ներկայացնել Ս. Մեղրյանի թեկնածությունը:

*Խորհրդի նախագահ*

*Գ. Ղազինյան*

*Խորհրդի քարտուղար*

*Տ. Միմոնյան*